

Կաթողիկէ հասարակութեան երկու տէ-
րանց ծառայելը, մէկզմէկէ բոլորովին
տարբեր երկու էական սկզբունք ընդունե-
ռած ըլլալը, մէկը միւսին հակառակ. ա-
հա այս է միակ պատճառ որ «ազգապատ-
կան»ը «աթոռապատկան»ին և «աթոռա-
պատկան»ը «ազգապատկան»ին, ռամկին
ըսածին պէս, ծուռ աչքով կը նային, և
երբ մէկը՝ ցաւ մը գգայ, միւսը անտար-
բեր, անհոգ կը մնայ, կարծած միեւնոյն ազ-
գին մէջ զատ մտքամոխիւնը, դատ անդա-
տեր եղած ըլլան: Կրնայ առարկուիլ թէ ազգ-
մը արդէն զանազան հաստատութիւննե-
րէ՝ կը կազմուի, և այս կազմութեան հե-
տեւանքն է որ, մեր մէջ ալ, ի մէջ այլոց,
այս երկու անուան տակ երկու ուրոյն
հաստատութիւններ կան. — Ո՛րք որ կրնայ
մերժել այս առարկութեան ճշգրտիւնը,
մական կրնայ Հայ-Կաթողիկէ մը հաստա-
տել թէ մեր մէջ այդ երկու անուանիւր
մէկզմէկէ բոլորովին զատ, անտարբա-
նակ, գրեթէ մէկմէկու հակառակ, — չըսեմ
թշնամի, — չեն:

